պետրոսի. զոր եթէ տէր կամեսցի. սկսանիմ յետ զատկին. զի այժմ ի պատրաստութիւն քարոզի պարապիմ, զոր ի մօտոյ սկսանիմ: Ընդդիմագրութեանն անուն եդի ի ճակատ գրքոյն Վահանն արքայն Պետրոսի և յաչորդաց նորա. և Տումարի արքայն Լեւոնի: Եւ կարծեմ թէ բաց յերից անտի երկու հատոր ես արտադրին՝ մինն վասն յաջորդաց, և միւսն վասն տումարին: Եւ մի հատոր ես ի սոսին յաւելեալ վասն քաղկեդոնի ժողովոյն:...

Առ այս գործ բազում անգամ պիտոյացաւ ինձ մեկնութիւն ոսկեբերանին, որ կայր ի վանս փատրոց. բայց ոչ գիտեմ զի՞ եղև. զի յետ գնալոյ կուռնելիոս եպիսկոպոսին ոչ ես երևի այն ի վանս. և ստոյգ է՝ թէ նա ոչ տարաւ ընդ իւր զայնչափ ծանրութիւն: կարծեմ թէ են. զի և ի խնդրել ի նոցանէ զայլ գիրս՝ յոյժ դժուարաւ տան: Իսկ զկլէմէսն զտի այլուստ. թէպէտ և այն միայն վասն վկայութեան սուրբ հարցն պիտոյանայ ինձ, և պիտոյասցի ես յետոյ վասն տումարի լեւոնին են.: Իսկ ձեռագիր աստուածաբանութիւնն կարի իմն պիտոյացաւ ինձ, մանաւանդ ճառն ի վերայ հաւատոյ... նաև ճառն ի վերայ երրորդութեան. քանզի յաւարտիլ սոցին՝ ի վերայ բղխման հոգւոյն սրբոյ ես կամիմ գրել, եթէ տէր կամեսցի. թէպէտ ժամանակ ես ոչ զոյ, ոչ միայն վասն երթևեկութեան, այլ յաւէտ վասն այսորիկ՝ զի յաչնան և ի ձմեռն մինչ ի զատիկ քարոզելոյ պարապիմ: Իսկ յամառան ջերմութիւն տօթոյն ոչ թողու:...

... պասրայածինք ողջոյն բթամիտ են և անմասն յիշողութեան, մինչև յետ հազարիցս կրկնելոյ զբան մի՝ հազի[ւ] տպաւորեն յուղեղն իւրեանց...:

Նուաստ ծառայ

ի *սեպտեմբերի* 13 1771 — Հ. Միքայէլ Չ[ամչեան] Վ. Ա.

ի *պասրայ*

3.

Տէր կոմիտաս նահատակի գերդաստանին վերաբերեալ նոր տեղեկութիւն մը ահա:

Գերյարգելի Տեառն Տեառն Ստեփաննոսի մեծի Վարդապետի
և Աբբայ Հօր զսուրբ աջն համբուրեմ

Որպէս գիտէ Գերյարգութիւն ձեր, թէ է ոմն ի Վիէննայ յազգէ մերմէ կայսերական քուրիէր Յօհաննէս Մօռնհայիմ անուամբ, որ է եղբայր կնոջ որդւոյ միոյ Երանելի տէր կոմիտասին. սա յետ մեռանելոյ որդւոյ տէր կոմիտասին և կնոջ նորա, և մնալոյ որդւոց նոցա որբացեալ, եա բերել զմի յորդւոց քեռ իւրոյ՝ (որ է թոռն տէր կոմիտասին) ի Վիէննայ, և ջանայ հանել նմա հաց ի կայսերէ, և ցանկայ ունիլ ի ձեռս զպատմութիւն տէր կոմիտասին, զի նովաւ ցուցեալ զզարմ քեռ որդւոյն դիւրեսցէ հանել զհացն. վասն որոյ գրեալ առ իս խնդրեալ է յինէն գրել առ Գերյարգելութիւն ձեր. զի վասն սիրոյ երանելի տէր կոմիտասին հաճեսջիք յղել ինձ օրինակ մի ի պատմութեանց նորա, որ լինիցի իտալերէն, և թէ ոչ, գոնեայ հայերէն, զի կարացից առաքել զայն ի Վիէննայ, զի յաջողեսցի խեղճ թոռան երանելոյն հաց ինչ յարքունուստ, և հաճեալ ընդ այս բարերարութիւն երանելւոյն եղեալ միոյ արենակցւոյն՝ բարեխօս լիցի վասն մեր. զոր և յանձն արարեալ բազում սրտի առատութեան Գերյարգելութեան ձերում մնամ պատասխանւոյ գրոյս, խնդրելով զներումն վասն աշխատութեանց հասուցելոց այսու առ Գերյարգելութիւն ձեր: Եւ յանձն առնելով զիս հաճոյական աղօթից Գերյարգելութեան ձերում

մնամ յամենայնի պատրաստական

1771 *Հոկտեմբերի* 21 — *Նուաստ ծառայ*

ի Դրիէստէ — *Յօհաննէս արիման քահանայ անարժան*